մի փչեց, ձեան խաւերն տակն ի վեր խառնեց, իւր կամաց հպատակեցնելով մղեց, ուր որ կամեցաւ։

Անցաւ յանկարծ դժոխային փոթորիկը, միջոց մի օդը հանդարտեցաւ, դու տես փոթորկի գործն։

Նա ½ ժամուան միջոցի մէջ ամբողջ դաշտս դրպ դուրան արած էր, ծեփած էր դար ու փոս, խոռոչ ու փապար, ծակ ու ծուկ, գետ ու գետակ, ձոր ու ձորակ, ամեն կողմն լժկցուցած՝ հարթ հաւասար դարձուցած էր։

Այլ ևս ուր են Մուրատ ու Շեռեան, Գարա Քիլիսէն և Արածանին, այն բազմաթիւ գետակներն և առուներն,—որոց հետքը, տեղը և նշմարանքը չես կարող տեսնել, կորուսիր ամեն բան, որ քեզ ծանօթ էին, չը կայ մի բարձր կամ ցած քեզ ծանօթ մի վայր, որոյ բաղդատելով միւս ծանօթ վայրերն գուշակէիր, այլ միայն կարող պիտի լինիս՝ մեր շուրջը պատած սպիտակ լեռնաշղթայն որոշել կապտագոյն երկնակամարէն։

Ձիւնը դարձեալ տեղալ սկսաւ, մի ժամից երկու թիզ ձիւն կուտուեցաւ, տանիքներու վերայ բարձրացած են մարդիկ, ձիւնը կը հորթեն, որպէս զի հալելով երդիքից ներս չը թափանձէ։

Այժմ մեր բանն է տուն հաւաքուիլ, տաք թունդիր կախուիլ, ընտանեկան խօսակցութեամբ պարապիլ և կամ ժողովրդական սաքուներն գնալ՝ անցած դարձածին վերայ խօսիլ ու դատողութիւն անել, վճիռներ արձակել, հէքեաթ լսել։

Ձմեռն իւր ընթացք թող շարունակէ, մեր թունդիր ամեն օր վառ է, ամէն օր թաժա հաց պատրաստ է, մեր պըտուկը կեռայ, մէջը ձաւարը և ջարդած թթու կաղամբը կեփի, դու կեր ու շարունակէ քո ընթացք։

Ոտք դրած ենք Դեկտեմբեր. սառնամանիքը աւելի սաստիկ է, մի կանգուն բարձրութեան վերայ եղեամ գոյանալով յերկիր կթափի, մի վայրկեան դուրսն չես կարող մնալ առանց աշխատելու, ընչաց քէդ սառոյցը կը կախուի։

Պարզ օրերը արեգակը ծագած ատենը բարձր լեռներն ստուեր մի կը ձգեն յարևմուտս, իսկ արև զարկած կողերն իրենց բիւրեղանման ճառագայթներն կանդրադարձնեն ի մեզ,